Հ Հ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի ելույթը Մայիսի 28-ին՝ Հանրապետության օրվա առթիվ Ապարանի Վերածնունդ հուղահամալիրում կայացած միջոցառման ժամանակ

Սիրելի հայրենակիցներ, մեծարգո հյուրեր

Այսօր տոն է Հայոց աշխարհում: Կրկին հավաքվել ենք ,,Վերածնունդ,, կոչվող այս հոյակերտ համալիրի բարձունքում եւ մեծագույն հպարտությամբ ու ոգեւորությամբ նշում ենք Հանրապետության օրը եւ Մայիսյան հաղթանակների տոները, որոնք սկիզբ են առել Ավարայրի ճակատամարտից եւ շարունակվել ու հասել մինչեւ Սարդարապատ, Ղարաքիլիսա եւ, ի վերջո, մեր հպարտություն՝ Բաշ-Ապարան:

Հայ ժողովրդի Մայիսյան հաղթանակների այս երթն իր շարունակությունն ունեցավ մեր օրերում՝ Արցախյան հերոսամարտում, որի ռազմական հաղթակամարը դարձավ Շուշիի ազատագրումը, եւ, հատկապես,Ապրիլյան քառօրյա պատերազմում, որտեղ մեկ անգամ եւս դրսեւորվեց հայ ժողովրդի միասնականության փառահեղ ոգին, երիտասարդ հայորդիների հայրենապաշտության ու հայրենասիրության անգերազանցելի զգացողությունը, որը միայն հպարտության, մեծարանքի եւ բարձր գնահատանքի է արժանի:

1918 թվականի մայիսի 28-ին հռչակվեց անկախ Հայաստանի Հանրապետության, որը մեր հայրենիքի համար ունեցավ ճակատագրական նշանակություն: Այդ պատմական իրադարձությամբ իրականություն դարձավ մեր պապերի դարավոր երազանքը՝ ունենալ ազատ եւ անկախ Հայաստան:

Շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Առաջին Հանրապետության օրվա կապակցությամբ: Նշանակալից այս տոնը խորհրդանշում է պայքարի բազում ուղիներ անցած եւ այդ ճանապարհին կարեւորագույն հաղթանակներ ունեցած հայ

ժողովրդի պետականության կերտման եւ պահպանման մեծագույն կամեցողությունն ու արժանապատիվ ապրելու ձգտումը:

Ազգային միասնության, ազատության ու անկախության, ինքնիշխան պետականության գաղափարների շուրջ մեր ժողովրդի համախմբվածության շնորհիվ այսօր Հայաստանի Հանրապետությունը լիիրավ քայլում է աշխարհի պետությունների հետ համընթաց: Այդ միասնությունն ու համախմբվածությունը զորավիգ են մեզ՝ մեծագույն հերոսություններով ձեռք բերված խաղաղությունը պահպանելու, անկախ պետականությունը զորացնելու գործում: Անկախություն, որի համար այսօր էլ, ցավոք, շարունակվում են հերսներ մարտիրոսվել, դրանով իսկ վերահաստատելով ազատ եւ անկախ ապրելու հայկյան հաստատակամությունը:

Հավերժ փա՛ռք բոլոր նահատակներին եւ հատկապես՝ մերօրյա հերոսներին:

Այս տոնական օրը հարկ եմ համարում իմ խորին շնորհակալությունը հայտնել մեր հայրենակից, մեծ հայրենասեր Աղվան Հովսեփյանին, ում անմիջական նախաձեռնությամբ եւ ջանքերով մեր մարզում կանգնեցվեց Հայոց Այբուբենի հուշահամալիրը՝ Տառերի պուրակը, Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի կապակցությամբ տեղադրվեց 1700 խաչից կազմված Մեծ խաչը եւ հարակից մատուռն ու ներկայումս կառուցվող եկեղեցին:

Շնորհավո՛ր տոնդ՝ ազատ եւ անկախ Հայաստանի Հանրապետություն:

Թո՛ղ որ անկախության մեր այս երթը անկասելի ու հարատեւ լինի: